ցամաքը տեսնալէն առաջ. ամենքն ալ, բաց 'ի երկուքէ, որ կիսակենդան ցամաք հասնելով՝ մեռան ծովեզերաց առջև՝ փրկութենէն երկու քայլ հեռու, նաւակէն ելլելու ատենը։ Այս երկու խեղճերը Աննա և Վարդուհի՝ Նոր-Եօրքէն՝ խենթ դարձած էին յուսահատութենէ, անօթութենէ, սարսափէ։ Ինկան՝ մանաւանդ թէ իրենք զիրենք ծով ձգեցին, մէկը շանաձուկներէ կերուեցաւ. միայն մարդը ցամաք ելաւ կիսամեռ։ Ի՞նչ տխուր պատմութիւն։

Տխուր պատմութիւն իրաւցընէ, որուն մէջ ամենայն ինչ դժնդակ է, որուն մէջ մէկ մխիթարութիւն մ'ալ չկայ։

Հետզհետէ տարակոյսը հը հաստատուի որ Իվանիկ-ադէռը բաւական ամուր եղած չըլլայ ամեն կարևոր ապահովութիւնը տալու համար.

Հնդկաց որբևարի կանանց սովորութիւնը.

Գառապաշտ Հնդկաց մէջ բարբարոսական սովորութիւններէն մէկն ալ այն էր որ որբևարի կանայք իրենք զիրենք կենդանւոյն կրակը կը նետէին 'ի նշան հաւատարմութեան և սիրոյ իրենց ամուսնացը։ Այս հանդէսս ըստ աստիճանի իւրաքանչիւրին խիստ փառաւոր և կամ միջակ հանդէսով կը կատարուէր։ Եթէ կինը ազնուական ցեղէ ըլլար, իր ամուսնոյն դիակը այրելու ժամանակ ինքը խարուկին քով հերարձակ և ցաւագին անձամբ նստած՝ յուսահատաբար մաղերը կը փետտէ, կուլայ, կը պոռայ մինչև որ դիակը բոլորովին աճիւն դառնայ. անկէ ետքը հանդարտելով այնպիսի զուարթութիւն մը կը ցուցընէ որ կարծես թէ աշխարհիս վրայ ամենէն աւելի մխիթարեալ և երջանիկ կինն ինքն ըլլար։ Նոր հարսի մը նման գեղեցիկ զգեստներով և թանկագին ակունքներով կը զարդարուի, և հոտաւէտ իւղերու մէջ թաթղուած՝ մէկ ձեռքը հայելի մը, մէկալ ձեռքն ալ ոսկեգոյն գեղեցիկ պըտուղ մը բռնած, նուագածուաց խըմբի մը մէջ պարելով, բոլոր իր ազգականները և բարեկամները հրաւիրելու կ'երթայ՝ որ իրեն հետ միատեղ դաշտը գան, ուր որ իր ամուսնոյն մարմինը այրեցաւ։ Իսկ թէ որ այս հրաւէրքս ինքը անձամբ չուզենայ ընել՝ զուրիշները կը խաւրէ իրեն տեղը, և ինքը ինչպէս նաև իր ազգականները, բոլոր օրերնին կաքաւներով և տեսակ տեսակ բարբարոսական ուրախութիւններով կ'անցընեն, ինչպէս թէ ամեն օր հարսանիք ըլլար։

Վերջապէս սահմանեալ ժամանակը հասնելով, առաջինէն աւելի հարուստ և գեղեցիկ զգեստներով և ազնիւ գոհարներով զարդարուած դուրս կ'ելլէ, և որպէս զի ամենն ալ զինքը լաւ կարենան տեսնել՝ սպիտակ ձիու մը վրայ նստած, փողերու ձայներով բոլոր իր ազգականներուն հետ միատեղ՝ երկայն ժամանակ քաղքին երեսի և բազմամարդ փողոցներուն մէջ վեր վար քալելէն ետքը, նորէն կը դառնայ այն տեղը ուր իր ամուսնոյն աճիւնքը իրեն գալըստեանը կ'սպասեն։ Այն տեղը իրեն համար փոս մը կը պատրաստեն, որուն խորութիւնը և լայնութիւնը մարդու մը հասակէն քիչ մը աւելի մեծ է, այս փոսս իւրաքանչիւրին հարստութեանը համեմատ մինչև 'ի վեր լեցուն է հալուէներով և տեսակ տեսակ անուշահոտ և թանկագին փայտերով։ Փոսին եզերքը տախտակամած բարձրաւանդակ մը կայ, որուն վրայ կ'ելլէ այրին 'ի տեսիլ անբաւ ժողովրդոց, որոնք հոն վրայէ վրայ դիզուած հանդիսին կ'սպասեն։ Ան միջոցին ինքը բարձրաւանդակին վրայ ելած՝ երեք անգամ չորս կողմը կը դառնայ և ինքը զինքը հանդիսականաց ցուցընելէն ետքը, դէպ 'ի արևելեան կողմը դառնալով ձեռուընները երկինք կը բարձրացնէ և երեք անգամ կը ծռի անոնց։ Այս արարողութիւններէս վերջը կամաց կամաց կ'սկսի բո-

վանդակ զարդարանքներէն մերկանալ զորոնք իր որդւոցը և ազգականացը կը բաժնէ, և այս բաներս այնպիսի զբ-ւարթ և անայլայլ դէմքով մը կ'ընէ, որ կարծես թէ շիտակ արքայութիւն պիտի թռչի։ Ասոնցմէ շատերը զօրաւոր ըմպելիքներով իրենք զիրենք կէս մը կը թմրեցնեն, որով և փոսին չորս կողմը հազար ու մէկ յիմարական խաղեր կը պարեն։ Այսպէս ամեն զարդարանքներէն մերկանալէն ետքը, մինչ կռոց պաշտօնեաներէն մէկը փոսին մէջ կրակ կը ձգէ, ինքը կը դառնայ մարդկանց և բարձր ձայնով կ'ըսէ անոնց. Տեսէք, ո՛ արք, թէ ո՛րչափ աւելի պէտք է սիրէք և յարգէք ձեր կանայքը, որոնք յօժարակամ անձնամահ կ'ելլան իրենց ամուսնաց դիականցը վրայ։ Վերջը կանանց դառնալով կ'ըսէ անոնց. Տեսէք դուք ալ թէ ո՛րչափ պէտք է սիրէք և հաւատարիմ ելլաք ձեր ամուսնացը։ Այսպէս ըսելով գլխուն վրայ գեղեցիկ սափոր մը կը բարձրացընէ լի անուշահոտ իւղով և կամ բալասանաւ, և սափորին հետ միատեղ գլխիվայր կայծականց մէջ կը գլորի։ Նոյն միջոցին իր որդիքները և ազգականները անուշահոտ եղեր կը լեցընեն վրան որով և քիչ ժամանակի մէջ կ'այրի և մոխիր կը դառնայ։

Բայց սակայն ամեն կին այս բարբարոսական և միանգամայն պարսաւելի արութիւնը չունենալով՝ չէր համարձակէր ինք զինքը կրակը նետել ամուսնոյն դիականը վրայ, որով և մեծ անարգանք կը պատճառէր իրեն անձին, վասն զի այնպիսւոյն գլխուն մազերը կը գերծէին և հանդիսական նզովքներով տանէն դուրս կը վռնտէին, որ ասդին անդին թափառական պտտելով կեանքը կ'անցնէր։

Արևելեան առաքիներ.

Պարկեշտ եղիր, և ամենքը զքեզ կը յարգեն. բայց երբոր քու խօսքերովդ կը ջանաս զուրիշները քու արժանաւորութեանդ համոզել, այս միայն բաւական է որ վրադ տարակուսին։

Ամենայն չար մտածութեան սկիզբը դատարկութիւնն է։

Դատաստաններէ զգուշացիր. կրակի կը նմանին, որ երբ կը բռնկի՝ դժուարաւ կը մարի։

Ով որ միշտ կը գործէ և ոչ երբէք կը խորհի, վերջապէս աշխատութիւնը կը կորսնցնէ։

Մարմինը քունով կ'ուժոգնայ, իսկ միտքը՝ հսկելով։

Մեծ հոգւոյ նշան է գթալ թշնամւոյն վրայ՝ անոր թշուառութեան ատեն։

Մարդուս համար ամենէն գնասակար սուրն է ցանկութիւնը։

Վհատութիւնը շատ աւելի ծանր է քան համբերութիւնը։

Մեծագոյն չարիքները լեզուէն առաջ եկած են։

Մեծ խոհեմութիւնն է տեսնել բանին սկիզբէն անոր կատարածը։

Ցարատեմ ձեռք զարկած բանիդ մէջ, և ամեն դժուարութեանց կը յաղթես։

Գործելէդ առաջ մտածէ, և բան մի՛ սկսիր առանց աղէկ քննելու պարագաները։

Լաւ գիրք մը և կամ լաւ խօսակցութիւն մը կրնան օգուտ ընել. բայց բարի օրինակը շատ աւելի զօրաւոր կը խօսի մարդուս սրտին։

Եղբայր մը՝ որ իր եղբօրը գնասովը իրեն դիւրութիւնը կը փնտռէ, ոչ եղբայր է և ոչ ազգական։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ